Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

I

Սովետական Միության բանվոր դասակարգը պատմական փառավոր ուղի է անցել։ Վ. Ի. Լենինի ստեղծած կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, երկրի բոլոր աշխատավորների հետ միասին, իրականացնելով Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը, նա ստեղծեց աշխարհում առաջին սոցիալիստական պետությունը։

Հաղթահարելով բազմապիսի ներքին և արտաքին դժվարություններ, սովետական ժողովուրդը, որի առաջավոր ուժը հանդիսանում է բանվոր դասակարգը, հասավ սոցիալիզմի վերջնական ու լիակատար հաղթանակին և այժմ հաջողությամբ առաջ է տանում կոմունիզմի կառուցումը։ Այդ՝ սովետական բանվոր դասակարգի, մեր երկրի ամբողջ ժողովրդի մեծ սխրագործությունն է։ Առանձնապես մեծ է բանվոր դասակարգի դերը կոմունիզմի կառուցման համար մղվող պայքարում։ Որպես մեր հասարակության ամենաառաջավոր դասակարգը, նրա քաղաքական, գաղափարական-բարոյական և կազմակերպական ազդեցությունը հանդիսանում է մեր հետագա առաջընթացի վճռական գործոնը։

Սովետական Միության բանվոր դասակարգը, իր ինտերնացիոնալ կազմով, մի հսկա բանակ է։ Նրա գլխավոր ջոկատը Սովետական Ռուսաստանի բանվոր դասակարգն է։ Ռուսաստանի բանվոր դասակարգի կողքին իրենց արժանի տեղն ունեն մյուս ազգային սովետական հանրապետությունների բանվոր դասակարգերը։ Վերջիններիս թվին է պատկանում նաև Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը։

Նախասովետական շրջանում Հայաստանի բանվոր դասակարգը փոքրաթիվ է եղել։ Այդ բացատրվում է արդյունաբերության թույլ զարգացմամբ։ Լինելով տնտեսապես ու կուլտուրապես հետամնաց ցարական Ռուսաստանի ծայրամասերից մեկը, Հայաստանը ցարիզմի և ռուսական ու օտարերկրյա կապիտալիստների կողմից դիտվել է որպես իրենց արդյունաբերության համար հումքի աղբյուր։

XIX դարի վերջերին, երբ կապիտալիզմը մուտք է գործում Անդրկովկաս և իր ոլորտումն է ընդգրկում տնտեսության տարբեր ճյուղերը, Հայաստանում նույնպես սկսում են ուժեղանալ կապիտալիստական հարաբերությունները, տեղի է ունենում արդյունաբերության որոշ զարգացում։ Այդ տեսակետից առաջին հերթին աչքի են ընկնում պղնձի հանքերի մշակությունը և պղնձի ձուլումը, գինու-կոնյակի արտադրությունը, բամբակի զտումը, տնայնագործությունը և այլն։ Այդ ժամանակ Հայաստանի պղնձի արդյունաբերու-

թյունը կենտրոնացած էր գլխավորապես ֆրանսիական կապիտալիստների ձեռքում։ Պղնձի արդյունաբերության մեջ աշխատող բանվորների թիվը 1890 թ. կազմում էր 1093, իսկ 1913 թ. արդեն հասել էր 2701-ի, այսինքն՝ ավելացել էր ավելի քան երկուսուկես անգամ[1]։

Հայաստանի բանվոր դասակարգի մնացած մասը զբաղված էր գինուկոնյակի արտադրության, բամբակի մշակության և տնայնագործական ու կիսատնայնագործական արտադրության մեջ։ 1910 թ. միայն Երևանի նահանգի 2642 տնայնագործական ու կիսատնայնագործական մանր արհեստանոցներում և ձեռնարկություններում աշխատում էր 10.306 բանվոր, իսկ Կարսի մարզում՝ 1100 բանվոր[2]։ Բացի դրանից, զգալի քանակությամբ բանվորներ աշխատում էին երկաթուղային տրանսպորտում և գյուղատնտեսության մեջ՝ որպես բատրակներ։

Բերված թվերը ցույց են տալիս, որ նախասովետական շրջանում Հայաստանում խոշոր արդյունաբերությունը թույլ էր զարգացած և նրա մեջ աշխատել է բանվորության փոքրաթիվ մասը, իսկ գերակշռող մասը՝ մանր և տնայնագործական արդյունաբերության մեջ։

Չնայած դրան, Հայաստանի բանվոր դասակարգը, Ռուսաստանի ու Անդրկովկասի բանվոր դասակարգի հետ միասին, որպես նրա ջոկատներից մեկը, կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ ակտիվ կերպով մասնակցել է համառուսաստանյան հեղափոխական շարժմանը։ Աշխատավոր գյուղացիության հետ միասին պայքար մղելով կալվածատերերի ու կապիտալիստների դեմ, նա իր ավանդն է մուծել 1905—1907 թվականների առաջին ռուսական հեղափոխության և 1917 թ. փետրվարյան հեղափոխության մեջ։ Իսկ երբ Ռուսաստանում հաղթանակեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, Հայաստանի բանվոր դասակարգը և բոլոր աշխատավորները, Ադրբեջանի ու Վրաստանի բանվոր դասակարգի և աշխատավորների հետ եղբայրական դաշինքի մեջ մտած, ծանր, բայց միաժամանակ հերոսական պայքար տարավ բուրժուա-նացիոնալիստական ուժերի և օտարերկրյա զավթիչների դեմ՝ հանուն Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի Անդրկովկասում։

Այդ պայքարում Հայաստանի բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիությունը, ստանալով Սովետական Ռուսաստանի և Անդրկովկասի ժողովուրդների անշահախնդիր եղբայրական օգնությունը, հասան պատմական հաղթանակի՝ 1920 թ. նոյեմբերի 29-ին երկրում հաստատելով սովետական իշխանություն։

Հայաստանի բանվոր դասակարգի ծոցում աճել են այնպիսի նշանավոր հեղափոխական գործիչներ, ինչպիսիք են Սերգո Մարտիկյանը, Սեդրակ Սարգսյանը, Մինաս Սարգսյանը, Գևորգ Հանեսօղլյանը, Սիմոն Էվոյանը և շատ ուրիշներ։

Լինելով համառուսաստանյան բանվոր դասակարգի մարտական ջոկատներից մեկը, նախասովետական Հայաստանի բանվոր դասակարգը անցել է զարգացման ու պայքարի հետաքրքիր ուղի։

---

1 Խանբեր Հայաստանի արխիվների, 1960, № 1, էջ 151։
2 Նույն տեղում, էջ 157։

Համառոտակի տեսնենք, թե ինչպես է լուսաբանվել նախասովետական Հայաստանի բանվոր դասակարգի պատմությունը սովետահայ պատմագրության մեջ։

Սխալ կլիներ ասել, որ մեր պատմաբաններն այդ ուղղությամբ ոչինչ չեն արել։ Իհարկե, նրանց կողմից որոշ աշխատանք կատարված է, որը պետք է գնահատել ըստ պատշաճի։

Տակավին 1947 թ. լույս է տեսել Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ, պրոֆեսոր Վ. Հ. Ռշտունու ստվարածավալ աշխատությունը[3], ուր հանգամանորեն վերլուծելով 1870 թ. գյուղացիական ռեֆորմը, հեղինակը ցույց է տվել նրա նշանակությունը Հայաստանում կապիտալիզմի զարգացման և բանվոր դասակարգի ձևավորման համար։ Դա սովետահայ պատմաբանների առաջին լուրջ ուսումնասիրություններից մեկն է, ուր խոսվում է երկրում կապիտալիստական հարաբերությունների զարգացման մասին։

1954 թ. լույս են տեսել պրոֆ. Հ. Ե. Թումանյանի[4], իսկ 1957 թ. պրոֆ. Մ. Ադոնցի[5] աշխատությունները։ Տնտեսագիտական այդ ուսումնասիրություններում խոսելով արդյունաբերության զարգացման մասին, հեղինակները հատուկ ուշադրություն են դարձրել Հայաստանի բանվոր դասակարգի պատմության առանձին հարցերի վրա։ Այդ հարցերը շոշափված են նաև պատմական գիտությունների դոկտոր Ա. Ս. Համբարյանի[6] և Ի. Գ. Կասպարովայի[7] աշխատություններում։

Ուշագրավ է պատմական գիտությունների թեկնածու Վ. Ա. Ավետիսյանի աշխատությունը, որը նվիրված է 1896—1900 թվականներին Թիֆլիս—Կարս և Ալեքսանդրապոլ—Երևան երկաթուղու շինարարության վրա աշխատող բանվորության պատմության մի շարք հարցերի լուսաբանությանը։ Այնտեղ հաջողությամբ ցույց է տրված երկաթուղու շինարարության վրա աշխատող բանվորության պայքարը երկաթուղային վարչության ու կապալառուների կամայականությունների և իրենց անլուր շահագործման դեմ։ Հեղինակը գրքին կցել է մի շարք կարևոր փաստաթղթեր, որոնք ավելի են բարձրացնում նրա գիտական արժեքը։

Կապիտալիստական հարաբերությունների զարգացման և բանվոր դասակարգի ձևավորման հարցը որոշ չափով լուսաբանվել է ռուսական առաջին հեղափոխության տարիներին Հայաստանում ծավալված հեղափոխական շարժումների պատմությանը նվիրված մի շարք աշխատություններում։ Դրանց թվին են պատկանում պրոֆ. Վ. Ա. Պարսամյանի «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.» (1955 թ.), Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից-

---

[3] В. А. Рштуни, Крестьянская реформа в Армении в 1870 г., Ереван, 1947.

[4] О. Е. Туманян, Экономическое развитие Армении, часть I (досоветский период), Госиздат, Ереван, 1954.

[5] М. А. Адонц, Экономическое развитие Восточной Армении, изд. Академии наук Арм. ССР, Ереван, 1957.

[6] А. С. Амбарян, Развитие капиталистических отношений в армянской деревне, изд. АН Арм. ССР, Ереван, 1959.

[7] И. Г. Каспарова, Меднорудная промышленность дореволюционной Армении и иностранный капитал, Ереван, 1961.

[8] Վ. Ավետիսյան, Մի էջ Հայաստանի բանվորական շարժման պատմությունից, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1964։

անդամ, պրոֆ. Ս. Պ. Ազայանի «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.» (1955 թ.) ուսումնասիրությունները։ Այդ հարցերը այս կամ այն չափով շոշափված են նաև պատմական գիտությունների թեկնածու Վ. Ա. Ավետիսյանի «Սուրեն Սպանդարյան» (1957 թ.), պատմական գիտությունների դոկտոր Խ. Հ. Բարսեղյանի «Степан Шаумян» (1960 թ.), պրոֆ. Մ. Վ. Արզումանյանի «Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907—1917 թթ.» (1959 թ.) աշխատություններում։

Ուշադրության արժանի են նաև 1905 թվականի հեղափոխության 50-ամյակի առթիվ՝ Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի հրատարակած հոդվածների ժողովածուները (1955 թ.), որոնցում մեծ տեղ է տրված Հայաստանի բանվոր դասակարգի առաջացման ու զարգացման, նրա հեղափոխական պայքարի պատմության հարցերին։ Այդ հարցերը առանձնապես մեծ հաչողությամբ լուսաբանված են «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր» կոլեկտիվ աշխատությունում (1958 թ. և 1963 թ. հրատարակություններ)։

1964 թ. լույս է տեսել պատմական գիտությունների թեկնածու Դ. Ա. Մուրադյանի ուսումնասիրությունը[9]։ Հիմնական գծերով շարադրելով ռուսական առաջին հեղափոխության տարիներին Հայաստանի վիճակը, նրանում տեղի ունեցած հեղափոխական պայքարը, հեղինակը զգալի տեղ է հատկացրել բանվոր դասակարգին։

Բացի հիշատակված աշխատություններից, նախասովետական Հայաստանի բանվոր դասակարգի պատմության հարցերը այս կամ այն չափով տեղ են գտել մեր առանձին պատմաբանների և հեղափոխական շարժման մասնակիցների հոդվածներում։

Թվարկված աշխատությունների մանրամասն վերլուծությունը մեզ հեռու կտաներ։ Ուստի հարկ չկա դրան դիմելու։ Սակայն, որպես եզրակացություն, հարկ է նշել, որ այդ աշխատություններից և ոչ մեկը չի նվիրված Հայաստանի նախասովետական շրջանի բանվոր դասակարգի ամբողջական պատմության ուսումնասիրությանը, այլ այդ հարցը միայն շոշափվում է քննարկվող մյուս հարցերի կապակցությամբ։

Ուստի, Հայաստանի նախասովետական շրջանի բանվոր դասակարգի պատմության ուսումնասիրությունը մնում է որպես սովետահայ պատմաբանների կարևորագույն հարցերից մեկը։

Մեր կարծիքով, Սովետական Հայաստանի պատմաբանները այսուհետև պետք է հատուկ ուշադրություն դարձնեն տվյալ շրջանի այնպիսի կարևոր հարցերի լուսաբանության վրա, ինչպիսիք են՝ նախասովետական Հայաստանի բանվոր դասակարգի առաջացումը և զարգացումը, Հայաստանի բանվոր դասակարգը որպես համառուսաստանյան և անդրկովկասյան հեղափոխական շարժման մարտական ջոկատներից մեկը, Ղափանի և Ալավերդու պղնձի արդյունաբերության պատմությունը և այլն։

Նպատակահարմար կլիներ, եթե Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի պատմաբանների միացյալ ուժերով ստեղծվեր Անդրկովկասի նախասովետական շրջանի բանվոր դասակարգի պատմությունը։ Այդ կարևոր նշանա-

9 Դ. Ա. Մ ու ր ա դ յ ա ն, Հայաստանը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1964։

կություն կունենար մեր աշխատավորությանը երկրամասի բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի ինտերնացիոնալ տրադիցիաներով դաստիարակելու գործում։

II

Սովետական իշխանության տարիներին, երկրի էկոնոմիկայի և կուլտուրայի բուռն զարգացման հետ միասին, հսկայական չափով աճել, ամրապնդվել ու կուլտուրապես բարձրացել է Հայաստանի բանվոր դասակարգը։

Կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության հետևողական կենսագործման շնորհիվ, ինչպես բոլոր ազգային հանրապետություններում, նույնպես և Սովետական Հայաստանում տեղի է ունեցել սոցիալիստական արդյունաբերության հսկայական վերելք։ Ուժեղ թափով զարգացել է ծանր արդյունաբերությունը և նրա հետ միասին արդյունաբերության մյուս ճյուղերը։ Առանձնապես վերջին տարիներում արագ տեմպերով աճել են ժողովրդական տնտեսության այնպիսի առաջատար ճյուղեր, ինչպիսիք են քիմիական արդյունաբերությունը, գունավոր մետալուրգիան, մեքենաշինությունը և սարքաշինությունը։ Ներկայումս Հայաստանում կա ավելի քան 600 արդյունաբերական ձեռնարկություն։ Բնորոշ է, որ եթե նախասովետական Հայաստանում եղած հատ ու կենտ արդյունաբերական ձեռնարկությունները աշխատում էին հետամնաց, տնայնագործական սարքավորումներով, ապա Հայաստանի ներկա արդյունաբերությունը զինված է հայրենական ժամանակակից ամենաառաջավոր տեխնիկայով։

Սովետական Հայաստանի արդյունաբերությունն աննախընթաց զարգացում ապրեց հատկապես յոթնամյակի տարիներին՝ 1959—1965 թվականներին։ Այդ տարիներին հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ 1,5 անգամ ավելի կապիտալ ներդրումներ կատարվեցին, քան սովետական իշխանության նախորդ բոլոր տարիներին՝ 1920—1958 թվականներին միասին վերցրած։

Յոթնամյակում Սովետական Հայաստանի արդյունաբերության արտադրանքն աճեց 2,2 անգամ։ Ստեղծվեցին և արագ զարգացում ապրեցին արդյունաբերության մի շարք կարևորագույն ճյուղեր՝ սարքաշինությունը, էլեկտրոնիկան, ռադիո-էլեկտրոնիկան, գործիքաշինությունը։ Հիմք դրվեց հաշվիչ մեքենաների արտադրությանը։ Ծանր ինդուստրիային զուգընթաց էլ ավելի զարգացան թեթև և սննդի արդյունաբերությունը։ Սովետական Հայաստանի արդյունաբերության արտադրանքը հաջողությամբ իրացվում է ոչ միայն եղբայրական սովետական հանրապետություններում, այլև արտասահմանյան շատ երկրներում։

1966 թ. Հայաստանի 122 արդյունաբերական ձեռնարկության արտադրանքի ավելի քան 130 տեսակ արտահանվել է արևմտյան Եվրոպայի, Լատինական Ամերիկայի, Ասիայի և Աֆրիկայի 69 երկիր։ Ներկայումս Սովետական Հայաստանը 5 անգամ ավելի մետաղահատ հաստոցներ է արտադրում, քան ամբողջ ցարական Ռուսաստանն արտադրել է 1913 թվականին, իսկ էլեկտրաէներգիա արտադրում է 1,5 անգամ ավելի։

Այդ Սովետական Հայաստանի բարձր կուլտուրա ունեցող բանվոր դասակարգի, փորձված ինժեներների, կոնստրուկտորների, արտադրության լա-

վագույն կազմակերպիչների նվիրական աշխատանքի կարևորագույն արդյունքներից մեկն է։

Արդյունաբերության այդպիսի ծավալմանն ու զարգացմանը զուգընթաց, մեծ չափով աճել է Հայաստանի բանվոր դասակարգը։

Դրա մասին պատկերացում են տալիս հետևյալ թվերը։ Եթե 1928 թ. Հայաստանի արդյունաբերության և շինարարության մեջ աշխատել է 15.681 բանվոր-ծառայող[10], ապա յոթնամյակի վերջում՝ 1965 թ. ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանվոր-ծառայողների թիվը հասել էր 628 հազարի, մեկ տարվա ընթացքում ավելանալով 46,3 հազարով[11]։

Այդ թվից ավելի քան 350 հազարը արդյունաբերության մեջ, շինարարությունում ու տրանսպորտում աշխատող բանվոր դասակարգն է, որի պատմության գիտական ուսումնասիրությունը եղել և մնում է մեր պատմաբանների կարևորագույն խնդիրներից մեկը։

Ինչպե՞ս է արտացոլվել սովետահայ պատմագրության մեջ հանրապետության սոցիալիստական շինարարության առաջատար ուժը հանդիսացող բանվոր դասակարգի բաղմահազարանոց բանակի պատմությունը։

Պետք է նշել, որ վերջին երկու տասնամյակում մեր պատմաբանների կողմից այդ ուղղությամբ զգալի աշխատանք է կատարվել։ Հայաստանում սոցիալիստական շինարարության առանձին էտապների պատմությանը նվիրված իրենց ուսումնասիրություններում նրանք զգալի տեղ են հատկացրել բանվոր դասակարգի պատմության առանձին հարցերին։

Այդ տեսակետից ուշադրության արժանի են Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի հրատարակած «Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության» կոլեկտիվ աշխատության առաջին[12], երկրորդ[13] և երրորդ[14] պրակները։

Առաջին պրակը ընդգրկում է Սովետական Հայաստանի 1917—1925 թթ. պատմությունը։ Այդ շրջանի պատմության գլխավոր հարցերի հետ միասին, պրակում լուսաբանվել են նաև Հայաստանի բանվոր դասակարգի վիճակը 1917—1920 թվականներին, նրա պայքարը սովետական իշխանության հաստատման և ամրապնդման, ինչպես նաև ժողովրդական տնտեսության վերականգնման համար հարցերը։ Այնտեղ ցույց է տրված արդյունաբերության վերականգնման հետ միասին հանրապետության բանվոր դասակարգի աճը, նրա տեղը և դերը երկրի քաղաքական, տնտեսական ու հասարակական կյան-

---

10 Социалистическое строительство Армянской ССР (1920—1940). Ереван, 1940, стр. 12.

11 «Սովետական Հայաստան», 6 փետրվարի 1966 թ.։

12 Հ. Մ. Էլչիբեկյան, Ա. Մ. Հակոբյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, առաջին պրակ (1917—1925), Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1954 (նույնը ռուսերեն, 1955 թ.)։

13 Վ. Գ. Մելիքսեթյան, Հ. Ս. Կարապետյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, երկրորդ պրակ (1926—1934), Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1958։

14 Մ. Պ. Աղայան, Ե. Մ. Խալեյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, երրորդ պրակ (1935—1945), Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1960։

քում։ Նույն հարցերը ավելի ընդարձակ կերպով շոշափված են մեր մենագրության մեջ[15]։

«Ուրվագծերի» երկրորդ պրակը ընդգրկում է Սովետական Հայաստանի 1926—1934 թվականների պատմությունը։ Այս պրակում նույնպես լուսաբանված են Հայաստանի բանվոր դասակարգի տվյալ շրջանի պատմության մի շարք հարցեր։ Այստեղ մասնավորապես ցույց է տրված ինդուստրացման և ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման հետ միասին Հայաստանի բանվոր դասակարգի աճը և զարգացումը, նրա հերոսական աշխատանքն ու պայքարը հանրապետության ինդուստրացման, ժողովրդական տնտեսության հետագա զարգացման համար, խոշոր օգնությունը աշխատավոր գյուղացիությանը գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում։

«Ուրվագծերի» երրորդ պրակը նվիրված է Սովետական Հայաստանի 1935—1945 թթ. պատմության լուսաբանմանը։ Այստեղ, մյուս հարցերի հետ միասին, նույնպես զգալի տեղ է տրված Հայաստանի բանվոր դասակարգի հետագա աճմանը և զարգացմանը, նրա հերոսական աշխատանքի ու պայքարի պատմության լուսաբանությանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին։

Սովետական Հայաստանի պատմության ընդհանուր հարցերի հետ միասին, բանվոր դասակարգի պատմության առանձին հարցերը իրենց լուսաբանությունն են գտել նաև մեր պատմաբանների մի շարք այլ աշխատություններում։ Այդ տեսակետից ուշադրության արժանի են ՍՄԿԿ ԿԿ-ին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի կողմից պատրաստած «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր» կոլեկտիվ աշխատության երկու հրատարակությունները[16] և Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի սովետական հասարակության պատմության սեկտորի աշխատակիցների կողմից պատրաստված հայ ժողովրդի պատմության ձեռնարկի երրորդ մասը, որն ընդգրկում է Սովետական Հայաստանի պատմությունը 1917—1956 թվականներին[17]։

Հայաստանի բանվոր դասակարգի ետպատերազմյան շրջանի պատմության հարցերին զգալի տեղ է տրված պատմական գիտությունների թեկնածու Ս. Վ. Խարմանդարյանի[18] և Ա. Մ. Հակոբյանի[19] մենագրությունների մեջ։

Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի պատմության հարցերը համեմատաբար ավելի հանգամանորեն շոշափված են պրոֆեսոր Հ. Ե. Թու-

---

15 Ա. Մ. Հ ա կ ո բ յ ա ն, Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում, 1921—1925 թթ., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1955։

16 «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Պետհրատ, Երևան, 1958, «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Պետհրատ, Երևան, 1963։

17 «Հայ ժողովրդի պատմություն», երրորդ մաս, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1957 և 1958։

18 Ս. Վ. Խ ա ր մ ա ն դ ա ր յ ա ն, Սովետական Հայաստանը չորրորդ հնգամյակի տարիներին (1946—1950), Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1960։

19 Ա. Մ. Հ ա կ ո բ յ ա ն, Սովետական Հայաստանը կոմունիստական շինարարության հինգերորդ հնգամյակի տարիներին, 1951—1955 թթ., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1962։

մանյանի՝ Հայաստանի տնտեսական զարգացման ուսումնասիրությանը նվիրված աշխատության երկրորդ մասում[20]։ Հարուստ փաստական նյութերի հիման վրա լուսաբանելով Հայաստանի սոցիալիստական էկոնոմիկայի զարգացումը 1920—1955 թվականներին, հեղինակը միաժամանակ ցույց է տվել բանվոր դասակարգի աճը և զարգացումը, նրա կատարած մեծ դերը հանրապետության արդյունաբերության բուռն վերելքի գործում։

Ինչպես տեսնում ենք, մեր թվարկած այդ աշխատությունները այնպիսի աշխատություններ են, որոնցում Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի պատմությունը միայն այս կամ այն չափով է տեղ գտել ուսումնասիրված ընդհանուր հարցերի շարքում որպես այդ հարցերից մեկը։

Վերջին տարիներս մեր պատմաբանների որոշ մասը լրջորեն ձեռնամուխ է եղել Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի ամբողջական պատմության, նրա առանձին հարցերի ուսումնասիրությանը։ Այժմ արդեն դրա առաջին արդյունքները հրապարակի վրա են։

1960 թ. Հայաստանի Պետհրատը լույս է ընծայել պատմական գիտությունների թեկնածու Ա. Կ. Գրիգորյանցի աշխատությունը[21]։ Արխիվային հարուստ նյութերի հիման վրա հեղինակը հիմնական գծերով շարադրել է Հայաստանի բանվոր դասակարգի պատմությունը սովետական իշխանության տարիներին։ Առաջին փորձը կատարելով այդ կարևոր թեմայի ուսումնասիրության ուղղությամբ, պետք է նշել, որ ընկ. Ա. Կ. Գրիգորյանցը կարողացել է հաղթահարել թեմայի հետ կապված մի շարք լուրջ դժվարություններ և ընթերցողներին ներկայացնել գիտական տեսակետից ուշադրության արժանի մի գործ։ Այնտեղ համառոտակի ցույց է տրված բանվոր դասակարգի առաջացումը և աշխատանքի ու կյանքի ծանր պայմանները նախասովետական Հայաստանում, հանգամանորեն լուսաբանված է Հայաստանում սովետական բանվոր դասակարգի ձևավորման պայմանները, սոցիալիստական արդյունաբերության, տրանսպորտի, շինարարության և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի զարգացման արագ տեմպերի ֆոնի վրա բանվոր դասակարգի քանակական և որակական աճը, նրա խոշոր դերը որպես առաջատար դասակարգ նոր հասարակարգի կառուցման համար մղվող պայքարում։ Գրքում մեծ տեղ է տրված Հայաստանի բանվոր դասակարգի բազմաթիվ նշանավոր ներկայացուցիչների գործունեության լուսաբանմանը։ Հայաստանի բանվոր դասակարգի պատմությունը հեղինակը շարադրել է Սովետական Միության բանվոր դասակարգի պատմության հետ սերտորեն շաղկապված, որպես նրա ջոկատներից մեկի պատմությունը։

Ընկ. Ա. Գրիգորյանցի աշխատությունն ընդհանուր առմամբ լինելով հաջողված աշխատություն, ունի նաև որոշ թերություններ։ Նրանում հեղինակը համեմատաբար քիչ է կանգ առել Հայաստանի բանվոր դասակարգի պատմության հարցերի վրա 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի տարիներին և ետպատերազմյան շրջանում, անբավարար է լուսաբանված Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրական կոլեկտիվների

---

[20] Проф. О. Е. Туманян, Экономическое развитие Армении, часть II, Советский период, Госиздат, Ереван, 1956.

[21] Ա. Կ. Գրիգորյանց, Հայաստանի բանվոր դասակարգը 40 տարում, համառոտ ակնարկ, Հայպետհրատ, Երևան, 1960։

սոցիալիստական մրցությունը եղբայրական հանրապետությունների համապատասխան արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվների հետ։ Աշխատության առանձին գլուխներում զգալի չափով շատ են երկրորդական նշանակություն ունեցող թվական տվյալները և մանր, ոչ էական փաստերը։

Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի պատմության ուսումնասիրության տեսակետից ուշադրության արժանի է նաև պատմական գիտությունների թեկնածու Ա. Վարդապետյանի աշխատությունը Հայաստանի արհեստակցական միությունների պատմության վերաբերյալ[22]։

Հարուստ փաստական նյութերի հիման վրա հեղինակը հիմնական գծերով ցույց է տվել հանրապետության արհեստակցական միությունների ստեղծումը և ամրապնդումը, նրանց ակտիվ մասնակցությունը ժողովրդական տնտեսության վերականգնման, նրա սոցիալիստական վերակառուցման, երկրի ինդուստրացման և ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացման համար մղված պայքարում։ Գրքում հանգամանորեն վեր է հանված հատկապես բանվորական արհեստակցական միությունների կատարած աշխատանքը։

Սակայն այդ աշխատությունը նույնպես ունի որոշ թերություններ։ Ընդգրկելով ժամանակագրական մեծ շրջան՝ 1920—1960 թվականները, հետևապես և հարցերի մեծ խումբ, հեղինակը որոշ հարցեր լուսաբանել է մակերեսային կերպով, հարկ եղած չափով չի խորացել նրանց մեջ։ Աշխատության մյուս թերությունն այն է, որ նրանում որոշ չափով աչքի է ընկնում փաստագրությունը և անբավարար են ընդհանրացումները։ Չնայած նշված թերություններին, այդ աշխատությունը կարևոր առաջընթաց քայլ է Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի պատմության ուսումնասիրության գործում։

Բացի թվարկված գրականությունից, մեր առանձին պատմաբանների կողմից վերջին տարիների ընթացքում ուսումնասիրվել է Սովետական Հայաստանի մի շարք արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների և քաղաքների պատմությունը, որը զգալի չափով լրացնում է բանվոր դասակարգի պատմության ուսումնասիրության գործում եղած բացը։

Դեռևս 1956 թ. լույս է տեսել պատմական գիտությունների թեկնածու Կ. Ս. Կոզմոյանի աշխատությունը նվիրված Երևանի Ֆ. Է. Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի պատմությանը[23]։ Այս գործարանը հանդիսանում է Հայաստանի մետաղամշակման ամենահին ձեռնարկություններից մեկը, որի բանվորությունը, ձեռնարկության հետ միասին, անցել է զարգացման հետաքրքիր ուղի։ Նախասովետական շրջանում լինելով մի փոքրիկ արհեստանոց, 12—15 բանվորով, այն ներկայումս դարձել է Հայաստանի մետաղամշակման խոշոր ձեռնարկություններից մեկը, որի արտադրանքը արտահանվում է արտասահմանյան շատ երկրներ։ Շարադրելով այդ գործարանի հիսուն տարվա պատմությունը, ընկ. Կ. Ս. Կոզմոյանը փաստորեն շարադրել է նրա բանվորական պանծալի կոլեկտիվի պատմությունը, կոլեկտիվ, որը հանդիսանում է Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի կարևոր ջոկատներից մեկը։

---

22 Ա. Վարդապետյան, Հայաստանի արհմիությունները 40 տարում, Հայպետհրատ, Երևան, 1960։

23 Կ. Ս. Կոզմոյան, Երևանի Ֆ. Է. Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի 50 տարին, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1956։

1958 թ. լույս է տեսել նույն հեղինակի մի այլ աշխատությունը՝ նվիրված Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի պատմությանը[24]։ Այդ կոմբինատը, որը հանդիսանում է առաջին հնգամյակի ծնունդը, Հայաստանի քիմիական արդյունաբերության խոշորագույն ձեռնարկություններից մեկն է։ Նրա արտադրանքը լայն տարածում ունի ոչ միայն Սովետական Միության մեջ, այլև արտասահմանյան շատ երկրներում։ Կոմբինատի բազմահազարանոց բանվորական կոլեկտիվը, հանրապետության բանվոր դասակարգի կարևոր ջոկատներից մեկը, մշտապես ընթացել է և ներկայումս էլ ընթանում է Սովետական Հայաստանի ոչ միայն քիմիական, այլ ամբողջ արդյունաբերության առաջավորների շարքում։ Աշխատության մեջ հանգամանորեն շարադրված է կոմբինատի 25 տարվա պատմությունը։ Փաստական հարուստ նյութերի հիման վրա ցույց է տրված, թե հանրապետության արդյունաբերության բուռն զարգացման հետ միասին ինչպիսի զարգացում է ապրել այդ ձեռնարկությունը, ինչպիսի դեր է խաղացել նրա արտադրական կոլեկտիվն այդ գործում։

1966 թ. ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս տեսավ ընկ. Կ. Ս. Կոզմոյանի «Ալավերդի» ուսումնասիրությունը։ Հարուստ փաստական նյութի հիման վրա այստեղ հանգամանորեն լուսաբանված է Հայաստանի հնագույն արդյունաբերական կենտրոններից մեկի՝ Ալավերդու բանվոր դասակարգի պատմությունը, Ալավերդի քաղաքի պատմության հետ միասին։

Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի պատմության առանձին հարցերը այս կամ այն չափով շոշափված են նույն հեղինակի նաև «Լենինական»[25] և «Կիրովական»[26] գրքերում։

Ընկ. Կ. Կոզմոյանի վերոհիշյալ աշխատությունները լինելով Հայաստանի առանձին գործարանների ու քաղաքների պատմության շարադրման առաջին փորձը և հանդիսանալով ուշադրության արժանի քայլ մեր պատմության մեջ, ինչ խոսք, որ զերծ չեն նաև որոշ թերություններից։ Նրանցում անբավարար չափով է խոսվում ուսումնասիրության առարկա գործարանների ու քաղաքների զարգացման դժվարությունների և դրանց հաղթահարման համար աշխատավորների մղած պայքարի մասին։

1965 թ. Երևանի պետական համալսարանի հրատարակությամբ լույս է տեսել պատմական գիտությունների թեկնածու Ա. Պ. Սիմոնյանի աշխատությունը Երևանի պատմության վերաբերյալ[27]։ Աշխատության մեջ հեղինակը առանձին գլուխ է նվիրել մայրաքաղաքի վերնոմիկայի զարգացմանը (էջեր 121—194)։ Այդ գլխում տրված է արդյունաբերության զարգացումը Երևանում սովետական իշխանության տարիներին։ Հեղինակը կանգ է առել մայրաքաղաքի կարևոր արդյունաբերական ձեռնարկությունների պատմության հիմնական էտապների վրա, ցույց է տվել Սովետական Հայաստանի բանվոր դասա-

24 Կ. Ս. Կոզմոյան, Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի 25 տարին, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1958։

25 Կ. Ս. Կոզմոյան, Լենինական, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1957։

26 Կ. Ս. Կոզմոյան, Կիրովական, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1960։

27 А. П. Симонян, Ереван, Очерк истории, экономики и культуры города, Ереван, 1965.

կարգի առաջավոր ջոկատի՝ Երևանի բանվորության հերոսական պայքարի ուղին։

Սակայն պետք է նշել, որ չնայած ընկ. Ա. Պ. Սիմոնյանի աշխատության մեծ ծավալին (530 էջ), նրանում համեմատաբար քիչ տեղ է հատկացված մայրաքաղաքի արդյունաբերության և բանվոր դասակարգի պատմության հարցերին։

Երևանի արդյունաբերական խոշոր ձեռնարկություններից մեկի՝ մահուդի կոմբինատի պատմությանն է նվիրված պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող Ա. Կ. Գրիգորյանցի և նույն կոմբինատի գլխավոր ինժեներ Գ. Ն. Մուշեղյանի աշխատությունը[28]։ Հեղինակները շարադրել են հանրապետության թեթև արդյունաբերության այդ խոշոր ձեռնարկության համառոտ պատմությունը։ Նրանք ցույց են տվել, թե ինչպես է կառուցվել այդ կոմբինատը, ինչպես է աճել ու զարգացել նրա արտադրությունը, ինչպիսի պայքար է տարել գործարանի կոլեկտիվը դրա համար, ովքեր են արտադրության առաջավորները, ինչպես է բարելավվել կոմբինատի բանվորների կուլտուր-կենցաղային պայմանները, որոնք հն գործարանի զարգացման հեռանկարները և այլն։

Բանվոր դասակարգի պատմության կարևոր հարցերից մեկը հանդիսանում է գյուղատնտեսական բանվորության (սովխոզների, նախկին ՄՏԿ-ների և այլն) պատմության ուսումնասիրությունը։ Պետք է նշել, որ մինչև վերջին տարիները այդ ուղղությամբ մեզ մոտ համարյա ոչինչ չէր կատարվել։ Հայաստանի գյուղատնտեսության բանվորության պատմության ուսումնասիրման առաջին քայլը պետք է համարել Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող ընկ. Վ. Ն. Ղազախեցյանի աշխատությունը, որը նվիրված է Սովետական Հայաստանի ամենահին սովխոզներից մեկի պատմությանը[29]։ Ուսումնասիրելով Էջմիածնի շրջանի № 3 սովխոզի պատմությունը՝ նրա ստեղծումից՝ 1921 թվականից մինչև 1962 թվականը, հեղինակը ցույց է տվել այդ սովխոզի աստիճանական զարգացումը։ Աշխատության դրական կողմերից մեկը պետք է համարել այն, որ հեղինակը հատուկ ուշադրություն է դարձրել սովխոզի զարգացման դժվարությունների վրա, համոզիչ կերպով ցույց է տվել, թե ինչպես այնտեղի բանվորությունն իր հերոսական աշխատանքով ու պայքարով կարողացել է հաղթահարել այդ դժվարությունները և հասնել կարևոր արդյունքների։

Սովետական Հայաստանի քաղաքների և առանձին արդյունաբերական ձեռնարկությունների պատմությանը նվիրված վերոհիշյալ աշխատությունների մեջ վեր է հանված ոչ միայն նրանց արտադրական կոլեկտիվների կատարած խոշոր աշխատանքը, այլև արտադրության բազմաթիվ առաջավորների կատարած գործը, նրանց առաջավոր փորձը։ Ցույց է տրված բանվոր դասակարգի կուլտուրական-տեխնիկական մակարդակի բարձրացումը, նրա նյութական պայմանների բարելավումը։

Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի պատմության հետ սերտորեն առնչվող հարցերից մեկը հանդիսանում է սոցիալիստական մրցությունը

---

28 Ա. Կ. Գ ր ի գ ո ր յ ա ն ց, Գ. Ն. Մ ո ւ շ ե ղ յ ա ն, Երևանի մահուդի և նուրբ բրդյա գործվածքների կոմբինատ, Երևան, 1964։

29 Վ. Ն. Ղ ա զ ա խ ե ց յ ա ն, Էջմիածնի շրջանի № 3 սովխոզը, ԳԱ հրատարակչություն, Երևան, 1964։

արդյունաբերության մեջ։ Այս հարցի լուսաբանությանն է նվիրված պատմական գիտությունների դոկտոր Լ. Ա. Խուրշուդյանի աշխատությունը[30]։ Այնտեղ տրված է առաջին հնգամյակի տարիներին Հայաստանի արդյունաբերության մեջ սոցիալիստական մրցության սկզբնավորման և ծավալման համառոտ պատմությունը, բացահայտված է բանվոր դասակարգի պայքարը արդյունաբերության հնգամյա պլանը կատարելու և գերակատարելու համար։

Հայաստանում սոցիալիստական մրցության ծավալման հարցին հատուկ գլուխ է հատկացված նաև պատմական գիտությունների թեկնածու Վ. Ն. Ղազախեցյանի ուսումնասիրությունում[31]։

Որպես դրական երևույթ, պետք է նշել այն փաստը, որ վերջին տարիների ընթացքում հրապարակ են եկել մի շարք աշխատություններ սոցիալիստական մրցության ավելի բարձր ու ժամանակակից ձևի՝ արդյունաբերության մեջ կոմունիստական աշխատանքի ծավալման մասին, որը դարձյալ սերտորեն առընչվում է բանվոր դասակարգի պատմության հետ։ Այդ տեսակետից ուշադրության արժանի են ընկ. ընկ. Ա. Կ. Գրիգորյանցի[32] և Պ. Սաֆյանի ու Ա. Վարդանյանի[33] գրքերը, որոնք փաստական հարուստ նյութերի հիման վրա ցույց են տվել Հայաստանի բանվոր դասակարգի հերոսական պայքարը յոթնամյա պլանի կատարման համար։

Ողջունելի նախաձեռնություն է ցուցաբերել ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալը։ Նա արդեն սկսել է հրատարակել հոդվածների ժողովածուներ Հայաստանում կոմունիստական աշխատանքի պատմության հարցերի վերաբերյալ։ 1963 և 1965 թվականներին լույս են տեսել այդ ժողովածուի առաջին[34] և երկրորդ[35] գրքերը։ Դրանցում զետեղված են հոդվածներ նվիրված հանրապետության արդյունաբերական տարբեր ձեռնարկություններում և կոլտնտեսություններում կուսակցական կազմակերպությունների փորձի լուսաբանությանը կոմունիստական աշխատանքի ծավալման և արմատավորման գործում։ Թեև այդ հոդվածների մի մասը զերծ չէ որոշ, նույնիսկ լուրջ թերություններից, բայց դրանք ուշադրության արժանի նյութ են պարունակում և կարևոր հարցեր են առաջ քաշում կոմունիստական աշխատանքի ծավալման համար Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի մղած պայքարի վերաբերյալ։

Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի պատմության վերաբերյալ արժեքավոր փաստական նյութ են պարունակում նաև Հայկական ՍՍՀ գի-

---

30 Լ. Ա. Խուրշուդյան, Հայաստանում սոցիալիստական մրցության պատմությունից (1928—1932), ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1961։

31 Վ. Ն. Ղազախեցյան, Սովետական Հայաստանը մեծ բեկման տարում, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1962։

32 Ա. Կ. Գրիգորյանց, Կոմունիստական աշխատանքի բրիգադները Հայաստանում, Երևան, 1961։

33 Պ. Սաֆյան, Ա. Վարդանյան, Նրանք աշխատում են կոմունիստաբար, Հայպետհրատ, Երևան, 1960։

34 «Հանուն կոմունիստական աշխատանքի», գիրք առաջին, Հայպետհրատ, Երևան, 1963։

35 «Հանուն կոմունիստական աշխատանքի», գիրք երկրորդ, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1965։

տությունների ակադեմիայի պատմության[36] և տնտեսագիտության[37] ինստիտուտների հրատարակած փաստաթղթերի և նյութերի ու հոդվածների ժողովածուները։

Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի պատմության մի շարք կարևոր հարցերը նախապատերազմյան հնգամյակների տարիներին հանգամանորեն լուսաբանված են պատմական գիտությունների թեկնածու Փ. Ի. Ենգոյանի աշխատության մեջ[38]։ Այդ ուսումնասիրությունը նվիրված է Հայաստանի ինդուստրացման համար Հայաստանի կոմունիստական կուսակցության մղած պայքարի պատմությանը 1926—1940 թվականներին։ Հարուստ փաստական նյութի հիման վրա հեղինակը ցույց է տվել բանվոր դասակարգի հերոսական աշխատանքն ու պայքարը Սովետական Հայաստանի սոցիալիստական արդյունաբերության զարգացման համար։

Բացի թվարկված աշխատություններից, Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի պատմության առանձին հարցերի վերաբերյալ գիտական ամսագրերում տպագրվել են մի շարք պատմաբանների և տնտեսագետների հոդվածները, պաշտպանվել են դիսերտացիաներ։

Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի պատմության ուսումնասիրության ուղղությամբ առանձնապես վերջին 3—4 տարիների ընթացքում զգալի աշխատանք է կատարված Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում։ Արդեն լույս է տեսել պատմական գիտությունների թեկնածու Ա. Կ. Գրիգորյանցի «Հայաստանի տեխնիկական ինտելիգենցիայի ձևավորումը և զարգացումը» մենագրությունը, ավարտված է պատմական գիտությունների թեկնածու Հ. Ս. Կարապետյանի «Հայաստանի բանվոր դասակարգի պատմության ուրվագծեր 1920—1940 թթ.» աշխատությունը։ Բացի դրանից, ներկայումս կատարման ընթացքումն են և շուտով կավարտվեն հետևյալ աշխատությունները.

1. «Հայաստանի բանվոր դասակարգը Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի տարիներին՝ 1941—1945 թթ.» (հեղինակ՝ պատմական գիտությունների թեկնածու Ե. Մ. Խալեյան), 2. «Հայաստանի բանվոր դասակարգի զարգացումը 1953—1965 թվականներին» (հեղինակ՝ պատմական գիտությունների թեկնածու Ա. Կ. Գրիգորյանց)։

Այդ աշխատությունների ավարտումով մենք արդեն կունենանք Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի պատմությունն ուրվագծային ձևով, որը մեր պատմագրության կարևոր հաջողություններից մեկը կլինի։

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի պատմաբանները, հատկապես վերջին տարիների ընթացքում, զգալի աշխատանք են կատարել ու կատարում են հանրապետության բանվոր դասակարգի պատմության ուսումնասիրության ուղղու-

---

36 «Великая Октябрьская Социалистическая революция и победа Советской власти в Армении» (Сборник документов), Айпетрат, Ереван, 1957 (*նույնը հայերեն, 1960)։ Մեծ Հոկտեմբերի դրոշի ներքո, հոդվածների ժողովածու, ԳԱ հրատ., Երևան 1957։*

37 «Восстановление народного хозяйства Армянской ССР» (материалы и документы за 1921—1928 гг.), изд. АН Арм. ССР, Ереван, 1958. *«Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960, հոդվածների ժողովածու», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1960։*

38 Փ. Ի. Ենգոյան, *Հայաստանի կոմպարտիայի պայքարը ռեսպուբլիկայի ինդուստրացման համար, «Միտք» հրատարակչություն, Երևան, 1965։*

թյամբ։ Բարձր գնահատելով այդ աշխատանքը, սակայն, հարկ է նշել, որ մենք դեռևս խոշոր անելիքներ ունենք այդ բնագավառում։

Նշելով սովետական գիտության հետագա խնդիրները, ՍՄԿԿ XXIII համագումարը ընդգծեց, որ «մեր գիտնականների գործունեությունը պետք է ուղղված լինի արդիականության գիտական հրատապ պրոբլեմների հետագա լուծման» նպատակին, որ «հասարակական գիտությունների բնագավառում սովետական գիտնականների կարևորագույն խնդիրն է էկոնոմիկայի, փիլիսոփայության և սոցիոլոգիայի, պատմության և իրավունքի պրոբլեմները մշակել կոմունիստական շինարարության պրակտիկայի հետ սերտ կապի մեջ»[39]։

Բանվոր դասակարգի պատմության ուսումնասիրությունը հանդիսանում է այդ կարևոր խնդրի բաղկացուցիչ մասերից մեկը։ Ուստի մենք դեռևս խոշոր անելիքներ ունենք տվյալ բնագավառում։

Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի ամբողջական գիտական պատմությունը ստեղծելու համար անհրաժեշտ է շարունակել գործարանների, արդյունաբերական առանձին ճյուղերի, Հանրապետությունում բուռն կերպով ծավալվող շինարարության և գյուղատնտեսության բնագավառում աշխատող բանվորների (սովխոզների և նախկին ՍՏԿ-ների) պատմության ուսումնասիրությունը, բանվոր դասակարգի կուլտուրական-տեխնիկական մակարդակի բարձրացման հարցերը։ Դրա հետ միասին պետք է բարձրացնել ավելի լայն շրջանակներ ընդգրկող հարցեր, ինչպիսիք են՝ Հայաստանի բանվոր դասակարգը ժողովրդական տնտեսության վերականգնման համար մղված պայքարում, նախապատերազմյան հնգամյակների կատարման ու գերակատարման համար մղված պայքարում, հայրենական պատերազմի տարիներին, ետպատերազմյան հնգամյակի տարիներին, յոթնամյակի համար մղված պայքարում և այլն։

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել բանվոր դասակարգի կուլտուրական-տեխնիկական մակարդակի բարձրացման պատմության, արդյունաբերության բնագավառում մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև եղած տարբերությունների աստիճանական վերացման հարցերի վրա։

Դրա հետ միասին պետք է ստեղծել մեր արտադրական-տեխնիկական ինտելիգենցիայի՝ արդյունաբերության մեջ աշխատող բազմահազարանոց ինժեներա-տեխնիկական բանակի գիտական պատմությունը, որը արդյունաբերության զարգացման գործում հսկայական դեր է կատարում։

Այդ բոլորի հիման վրա անհրաժեշտ է ստեղծել մենագրություններ Հանրապետության բանվոր դասակարգի ամբողջական պատմության վերաբերյալ։

Նպատակահարմար է եղբայրական Ադրբեջանի և Վրաստանի պատմաբանների հետ միասին գրել Անդրկովկասի բանվոր դասակարգի պատմությունը ինչպես սովետական իշխանության հաղթանակի համար մղած պայքարի, նույնպես և Անդրկովկասյան Ֆեդերացիայի ժամանակաշրջանում։ Այդ խոշոր չափով կնպաստի երկրամասի աշխատավորության կոմունիստական դաստիարակության գործին։

---

39 ՍՄԿՊ XXIII համագումարի բանաձևը ՍՄԿՊ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցման առթիվ. «Սովետական Հայաստան», 9 ապրիլի 1966 թ.։